ԳՐԱԽՕՍՈՒԹԻՒՆ, ՍՈՂՏԵՆԱԳԻՏՈՒԹԻՒՆ

ԱԿԱՆԱՎՈՐ ՆԿԱՐՉԻ ՊԱԿՏԵՐԱԳԻՐՔԸ

ՀՄԱՅԱԿ ԱՎԵՏԻՍՅԱՆ՝ արվեստի իմաստուն
ստեղծագործող, որ սերունդներ է դաստիարակել
ու դրել ճշմարիտ արվեստի ուղու վրա:
ԵՐՎԱՆԴ ՔՈՉԱՐ

Լույս է տեսել արվեստի վաստակավոր գործիչ, մեծապատանդ գեղանկարիչ, գծանկարիչ, պրոֆեսոր Հմայակ Ավետիսյանի գեղանկարների եւ գրաֆիկայի 224 էջանոց շքեղ ալբոմը: Հրատարակվել է Երեւանում, հեղինակային հրատարակությամբ, հայերեն, ռուսերեն եւ անգլերեն, PRINTINFO տպարանում, ընդգրկում է 246 գունավոր վերատպություն[1]: Այս մեծածավալ գործի անձնվեր ու տքնաջան հեղինակը, կազմողն ու թարգմանիչը, նկարչի դուստրն է՝ արվեստաբան, Լենինգրադի գեղարվեստի ակադեմիայի շրջանավարտ, փիլիսոփայական գիտությունների թեկնածու Արմենուհի Ավետիսյանը: Նկարչի ծննդյան 100-ամյա հոբելյանին նա հրաշալի նվեր մատուցեց՝ գիրքհուշակոթող պարգեւելով հայ եւ այլազգի արվեստասերներին:

Ալբոմի կազմին նկարչի ծննդավայր Վանի նահանգի Մանդան գյուղի գեղանկարբնանկարն է՝ կարոտի աչքերով ստեղծված 1973թ.: Կես դարից ավելի էր անցել այն օրերից, երբ նկարիչը զրկվել էր հուշ դարձած, բռնազավթված իր հայրենի գյուղից:

Արվեստագետի հետ ընթերցողի հանդիպումը սկսվում է ժողովրդական նկարիչ **Էդվարդ Իսաբեկյանի** «Ուշացած խոսքով» խոստովանությամբ՝ գրված 1985թ. Հ. Ավետիսյանի ստեղծագործությունների հետմահու ցուցահանդեսի կապակցությամբ: Վարպետի գնահատության խոսքում նշված է նաեւ. «Հմայակ Ավետիսյանը գիտեր արժեք ստեղծելու, բնորդից ստեղծագործություն արարելու հնարագիտությունը: Պարզ, հասարակ մարդկանց նկարելիս հրաշք էր տեղի ունենում... ծեր պահակն էր թե կթվորուհին... հորթապահն... էր թե այգեգործը՝... դառնում էին ձուլածո կիսանդրիներ՝ պատվանդանի արժանի: Եւ դիմանկարներն իսկապես ձուլվում էին ներկով, վրձնով: «Ներկերը ծեփում էր հաստ շերտերով՝ գույնի ծայրագույն հագեցվածությամբ օխրաները խառնե-

1 «Հմայակ Ավետիսյան. 1912-1978. Գեղանկար. Գրաֆիկա», Երեւան, 2012, հեղինակ-կազմող Արմենուհի Ավետիսյան:

լով սեւի, ուլտրամարինի հետ... թանձր էր նկարում, ինչպես իր մտքերն էին թանձր, խառնիխուռն տագնապով: Իսկական գեղանկարիչ էր:

Սիրահարված էր բնանկարին ... «Ո՛ր տեղ չի նկարել Ավետիսյանը, Բջնի, Հրազդան, Սեւանի ափերը, Եղեգնաձոր, Աշտարակը՝ իր շրջապատի գյուղերով, վանքերով, կամուրջներով, Օշական, Մուղնի /ի՜նչ բնանկար է Մեծ Արարատի բաշը Մուղնու եկեղեցու հետ/: Եւ սիրում էր մամռոտած, ժանգոտած քար ու լեռը, ջղային, պատառոտված երկինքը՝ նույնքան նյութական, շոշափելի, ինչպես լեռները»:

Խորաթափանց ներկայացնելով Ավետիսյանի արվեստը՝ Է. Իսաբեկյանը տալիս է նաեւ նրա անձի հակիրճ բնութագիրը. «Միշտ հանգիստ, մտածկոտ, զուսպ ու չափուկշռով: Բայց նայեք ինքնանկարներին, եւ նյարդային կծիկներ կտեսնեք աչքերում, զայրույթ, ցասում՝ պայթելու պատրաստ:... Նրա վերջին ինքնանկարը, որի նայվացքը նույնպես դիտողին է ուղղված, եւ դժվար է նայել, բայց եւ դժվար չէ ընկալել ասելիքը, որ խոսքով չի ասվի: Ինքնանկարները բոլորը մատիտով են նկարված:... Մատիտանկարը նկարիչ համարվելու առաջին գրավականն է, միակ ճշմարիտ ապացույցը: Ճշմարիտ նկարչի գծանկարը եւ գեղանկարը կուռ ամբողջություն են, բոլոր մեծ վարպետների մոտ այդպես է, այդպես էլ կմնա... Ավետիսյանի գեղանկարի ամրությունը նույնպես բխում է նրա գծանկարի վարպետությունից:...

Նրա հատկապես վերջին տարիների գեղանկարներում կիսատոների պակաս է զգացվում... Դա չխանգարեց ստեղծելու... բնանկարներ, որոնք զնգում են Ավետիսյանի զգայարանների ռիթմով ու նվագով, մութ ու լույսի զգայնությամբ, թանձր գունային հագեցվածությամբ, կոնտրաստներով: Եվ դա նոր խոսք էր՝ ասված Ավետիսյանի վրձնով»:

Անդրադառնալով Ավետիսյանի թեմատիկ կտավներին՝ Իսաբեկյանը շեշտում է. «Կոմպոզիցիոն ֆիգուրատիվ նկարը մի շնչով չի ստեղծվի, դրա համար, հանդգնությունից բացի, պրոֆեսիոնալ մեծ կարողություն է պետք, տառապալի համբերություն, համառություն: Հմայակ Ավետիսյանը ուներ թե՛ մեկը, թե՛ մյուսը...»:

Արմենուհի Ավետիսյանը «Եթէ հիմերը կործանին...» ներածականում համապարփակ վերլուծություն է կատարել՝ ամբողջական ընդգրկմամբ դիտարկելով նկարչի ստեղծագործական ուղին:

Հմայակ Ավետիսյանը (1912-1978) մտավորականության այն սերնդից էր, որը կյանք մտավ մեր պատմության ամենաօրհասական տարիներին:

Սաղմոսից վերցված խոսքերը դիպուկ բնութագրում են Հայոց Մեծ եղեռնը վերապրած հարյուր հազարավոր որբերի հոգեվիճակը, որոնց կյանքի հիմերը կործանվում էին, զրկվել էին ծնողներից, ընտանիքից, հայրենիքից, եկեղեցուց, Աստծո խոսքից, բայց չչարացան, մնացին բարի եւ Ամենազոր Սիրո ուժով Նրա երկնառաք շնորհներով հաղթանակեցին:

Նա գրում է. «Ավետիսյանին հուզում էր ամեն ինչ՝ արդիականությունը, անցյալը եւ ապագան, արտաքին աշխարհը եւ անհատի ներաշխարհը, բնությունն իր կացությունների անսահման հարստությամբ: Իրականության այդքան լայն ընդգրկումը պայմանավորել է նաեւ ժանրային տարբերակումը՝ պատմական գեղանկարչության ժանր,

դիմանկար, բնանկար... Տարբեր ժանրային պատկանելիությամբ ու այուժեով ստեղծագործություններն այնքան սերտ են կապված միասնական թեմայով, միեւնույն արժեքների հեղեղողական հաստատունությամբ, որ բնանկարը, կամ դիմանկարը դառնում են ոչ պակաս պատմական եւ բովանդակության առումով հաճախ չեն զիջում Ավետիսյանի կոմպոզիցիոն-թեմատիկ կտավներին:...

Նկարչին անհրաժեշտ եղավ անցնել երկարատեւ, մտորումների եւ իմաստավորման բարդ ուղի՝ ասելու այն ամենը, ինչ բխում էր հոգուց»:

Ալբոմում աշխատանքները ներկայացված են չորս ժամանակաշրջաններով (1932-41թթ., 1946-55թթ., 1956-65թթ., 1966-78թթ.):

Բնութագրելով Երկրորդ աշխարհամարտից քայքայված առողջությամբ վերադարձած նկարչի առաջին հեղափոխական տասնամյակը՝ հեղինակը նշում է, որ դա Ավետիսյանի համար տանջալի մտորումների եւ երկընտրանքի մի շրջան էր: 1950-ականների կեսին նա արդեն ճանաչված նկարիչ էր: Նրա ձիրքն ու վարպետությունը բարձր գնահատելով՝ հարկ եղած դեպքում նրան էին դիմում ժողովրդի «առաջնորդներին» պատկերելու պատվերներով, նա հեշտությամբ կարող էր դառնալ պալատական նկարիչ, արժանանալ բազում արտոնությունների, կոչումների, հասնել բարեկեցության: Մնում էր միայն կատարել ժամանակի ընկերային հրամայականը. «...մեզ գերի ընողները Հոն մեզմէ երգ մը պահանջեցին Ու մեր կողոպտիչները՝ ուրախություն...» (Սաղմ. ԺԼԶ. 3): Բայց Ավետիսյանն ընտրեց հակառակ ուղին:

1956թ. ստեղծած «Ազատարարները» կտավը (թեման՝ 11-րդ Կարմիր բանակի «մուտքը» Հայաստան) դարձավ եւ՛ նախազգուշացումների, եւ՛ սուր քննադատության առարկա:

Ռուսական բանակի հրամանատարն ուներ տիպիկ հայկական դիմագծեր: Ընտ նկարչի, ոչ մի բանակ դրսից չի կարող ազատություն բերել: Ավետիսյանի համար ազատարարի օրինակ ընդմիշտ մնացին Ղարաքիլիսայի, Բաշ-Ապարանի, Սարդարապատի հերոսները: Ինչպես նշում է Արմենուհի Ավետիսյանը, գլխավոր հերոսի ազգային պատկանելության հարցով տարված՝ «քչերն ուշադրություն դարձրին մեկուսի կանգնած որբ աղջկա պատկերին: Նկարի մեջ էլ... ոչ ոք կարծես չի նկատում նրա ներկայությունը: Թվում է, թե նա շատ մոտ է, բայց ոչ մեկը չի շտապում նրան ընդառաջ, նրան չեն հասնում հնչյունները, մարում է շարժումը, նկարի երրորդ մասը գրավում է մոլոր ու միայնակ որբուկը՝ վեհաշուք բնանկարի ֆոնին: Եւ հենց դա է ողջ կոմպոզիցիայի կենտրոնական կերպարը՝ կորուսյալ հայրենիքը մարմնավորող որբ աղջնակը»:

Որբացած հայրենիքը դարձավ Ավետիսյանի ստեղծագործության առանցքը, գտավ իր մարմնավորումը նկարչի բնանկարներում, բացահայտվեց դիմանկարներում եւ նույնիսկ՝ Լենինի կերպարում:

...1963թ. Ավետիսյանը ստեղծում է «Վ. Ի. Լենին» մոնումենտալ հնչեղություն ունեցող մեծադիր կտավը, որում դիտողը, իսկ առաջին հերթին դա ԿԳ Կենտկոմի ընդունող հանձնաժողովն էր, անմիջապես տեսավ հեղափոխություն կերտողի «մռայլ վեհությունը»: Ավետիսյանական Լենինը (որին նկարիչը ոչ այլ կերպ, քան դահիճ էր անվանում)՝

գլխավոր հերոսը այն մեծագույն ողբերգության, որ արյունոտ հրացոլքով կործանեց առանձին անհատների եւ ժողովուրդների ճակատագիրը,- սպացավ «արգելված է» կնիքը:

1965թ. հայրենասեր նկարիչն ուղղակիորեն դիմում է լռության դատապարտված Հայոց Մեծ եղեռնի թեմային «Երախտապարտ ենք» /«Կոմիտաս»/ մեծադիր կտավում, ուր առաջին անգամ տեսնում ենք հայոց արդարադատ, վրիժառու զավակներին՝ Սողոմոն Թեհլերյանին եւ Արամ Երկանյանին, որոնց հետ գլուխը բարձր պահած, ուս-ուսի եւ ձեռքերով միացած է մեծն Կոմիտասը: Ազգը ծնկաչոք երախտապարտ է իր զավակներին:

Ինչպես վկայում է հեղինակը, ավելի չեզոք ժանրերում նույնպես Ավետիսյանն այնքան անթաքույց կերպով էր բացահայտում իրականության հակասությունները, որ նրա առանձին ստեղծագործություններ անմիջապես արգելքի տակ էին հայտնվում: Դա եւ՝ «Հառիճ.գիշեր» բնանկարն է, ուր վրա հասած խավարն ի զորու չէ մարելու հալածյալ ճշմարտության լույսը, եւ՝ «Տեղեր»-ն է՝ ձմեռը մեր հավատքի, եւ՝ «Սեւանի բողոքն է՝ մերկացած ափերով կործանվող լճի լռելյայն կանչը... «Մուսալեռցի տատը» եւ Լենինականի դեպոյի բանվորների կերպարները, որոնք այնքան հեռու էին իշխող գաղափարախոսության ընդունված հիմնադրույթներից:

Բազմաթիվ դիմանկարներում, մարդու ներաշխարհը թափանցելու իսկական նկաչին բնորոշ անընդունելի ունակությամբ, Հ. Ավետիսյանը խոսում է կյանքի... մասին, եւ ընդհանրացման բարձր աստիճանի շնորհիվ նրա դիմանկարները հաճախ ընկալվում են որպես հայտնություն:

Ավետիսյան-գեղանկարչի եւ գծանկաչի տաղանդը ոչ պակաս ուժով դրսեւորվել է նաեւ բնանկարներում: Նրա յուրաքանչյուր բնանկար մի ուրույն տրամադրություն է... Այդպես ծնվում են բնության պատկերները, որոնք ճառագում են մե՛րթ անդորը կամ զմայլանք, մե՛րթ խռովահույզ հրավեր կամ անելանելի թախիծ: ...Այդպես են ծնվում կտավներ՝ բնանկար-կենսահաստատում, բնանկար-մեղադրանք, բնանկար-հայրենաբաղձություն:...

Ընդհանրացնելով իր խոսքը՝ Արմենուհի Ավետիսյանը հիշեցնում է. «Հիմնարար ուժը, որը դրդել է նկարչին ստեղծագործել, բարձրագույն իմաստը, հանուն որի նա ստեղծել է իր կտավները, դա նախ եւ առաջ խոր հավատն էր Հայաստանի իրական վերածննդի նկատմամբ եւ սերը կյանքի, ազատության, արդարության եւ, ամենագլխավորը՝ մարդու նկատմամբ»:

Գրքում հիմնավորապես ծանոթանում ենք նաեւ նկարչի կյանքի ու գործունեության տարեգրությանը՝ վավերացված 27 լուսանկարներով: Վերջում ներկայացված է համառոտ մատենագիտություն, որի առավել լրիվ ցանկը գտնվում է Հայաստանի ազգային պատկերասրահի ձեռագրահուշագրային բաժնում եւ Հայաստանի ազգային արխիվում:

Յուրաքանչյուր արվեստասեր, աշխարհի ցանկացած վայրում, թերթելով Հմայակ Ավետիսյանի ալբոմի էջերը՝ կծանոթանա մեծատաղանդ նկարչի խորը եւ սրտահույզ արվեստին եւ կձգտի բնօրինակները տեսնել: Յուրաքանչյուր նկարի առջեւ կարելի է կանգնել, սիրով անդրադառնալ ու հիանալ:

Ընդամենը նշենք Վահրամ Փափազյանի, Խաչիկ Դաշտենցի, Հակոբ Կոջոյանի, Մարտիրոս Սարյանի, Ռուբեն Աղալյանի, Արա Բեքարյանի, Մ. Տիրատուրյանի, Սերո Խանզադյանի, քանդակագործներ՝ Ռ. Եկմալյանի, Գ. Մեծատուրյանի եւ շատ ուրիշների սքանչելի դիմանկարները:

«Խավարե՛ս, Լո՛ւսին». Ավետիս Ահարոնյանի համանուն ողբերգական պատմվածքի մոտիվներով, որտեղ դեպքերը կատարվել են դեռեւս 1895-1899թթ. սանձազերծված Հայոց ցեղասպանության տարիներին, «Տեսարան Գորիսից» 1974թ. յուղաներկ կտավում Հայոց ժայռակարկառների վրա Տիրոջ փրկության թեւատարած Խաչի լույսն է, որ կամրջում է եթերային հեռուները:

Ավետիսյանին աշակերտած սերունդների շատ ներկայացուցիչներ դարձան ԽՍՀՄ Գեղարվեստի ակադեմիայի թղթակից-անդամներ, հանրապետության վաստակավոր նկարիչներ, արվեստի վաստակավոր գործիչներ:

Ալբոմի լույս ընծայման առթիվ իրենց սրտի ջերմ խոսքն են արտահայտում նրանցից երկուսը:

ՋԱՔԱՐ ԽԱՉԱՏՐՅԱՆ, Հայաստանի ժողովրդական նկարիչ, Ռուսաստանի վաստակավոր նկարիչ, Հայրենական Մեծ պատերազմի 2-րդ խմբի գինհաշմանդամ, Ս.Պետերբուրգի նկարիչների միության վետերանների խորհրդի նախագահ, Երեւանի Խ.Աբովյանի անվան պետական մանկավարժական համալսարանի պրոֆեսոր. «Ես շատ ուրախ եմ, որ այսպիսի ալբոմ է տպագրվել: Շատ շնորհակալ աշխատանք է կատարվել: Հմայակ Ավետիսյանը մեր ժողովրդի նոր հոգեբանական տեղաշարժերի ջատագովներից էր: Նա իր ուրույն ստեղծագործական լեզվով կերտեց պարզ ու մոնումենտալ կոմպոզիցիոն կտավներ, ժամանակակիցների բազմաթիվ դիմանկարներ, որոնց հատուկ է հոգեբանական նրբերանգների հարստություն, բնության գունագեղ, ամենատարբեր ձեւերի ու ծավալների մեջ դրսեւորված, խորիմաստ պատկերներ, թե՛ գեղանկարում, թե՛ գրաֆիկայում:

Խոշոր արվեստագետներին նվիրված նաեւ նրա դիմանկարները հազվագյուտ արժեք են ներկայացնում մեր ժողովրդի մշակույթի համար: Նա հրաշալի վարպետ էր, դա անժիտելի հանգամանք է: Ալբոմը դիտողն անմիջապես համոզվում է դրանում: Շատ լավ մտածված ու մեծատաղանդ նկարչին լիովին ու պատշաճ ներկայացնող ալբոմ է:

Հմայակ Ավետիսյանն իմ ուսուցիչն է եղել: Դասերի ժամանակ հաճախ պատմում էր Լենինգրադում իր ուսանելու ընթացքում եղած հիշողությունները՝ ընկերների, արվեստագետների, արվեստանոցների մասին: Իր խոսքերից ոգեւորված ընկերոջս հետ որոշեցինք գնալ Լենինգրադի գեղարվեստի ակադեմիայում ուսանելու: Նրա բարի գործը ես երբեք չեմ կարող մոռանալ: Նա շատ մաքուր եւ անկեղծ մարդ էր: Ես նրան շատ եմ սիրել հատկապես որպես իմաստուն մանկավարժի. իր շնորհիվ ես նկարիչ դարձա:

Ասածս շատ շնորհակալ եմ, որ ես բախտ ունեցա լինելու Ավետիսյանի ուսանողներից ու ճանաչելու Հմայակ Ավետիսյան հրաշալի մարդուն»:

ՍՈՒՍԱՆՆԱ ՏՈՆՈՅԱՆ, Երեւանի Գեղարվեստաթատերական ինստիտուտի 1971թ. շրջանավարտ, կինոյի, թատրոնի եւ հեռուստատեսության նկարիչ, Երեւանի պե-

տական խամաճիկների թատրոնի նկարիչ-քանդակագործ: «Գիրքը հիանալի ընդգրկում է Հ. Ավետիսյանի ամբողջ ստեղծագործությունը: Համակուրսեցիներիս նա հաճախ էր հրավիրում իր արվեստանոց: Մենք միշտ նաեւ Նոր տարուն գնում էինք իրենց տուն եւ վայելում շատ հյուրընկալ ու ջերմ ընտանեկան մթնոլորտը, որ ստեղծում էր նաեւ շատ բարեհամբույր ու բարձրակիրթ իր տիկինը՝ Արաքս Հունանյանը: Ես Ավետիսյանին ճանաչում եմ որպես եւ՛ գծանկարի մեծագույն վարպետ, եւ՛ շատ ինքնատիպ գեղանկարիչ՝ յուրօրինակ կոլորիտով, հատուկ վերաբերմունքով դեպի հարազատ բնությունը՝ ոչ սարյանական, հաճախ մուգ, բայց եւ խորհրդավոր ու հեփաքրքիր գույների համադրությամբ: Առանձնակի կարող եմ ընդգծել նրա դիմանկարները, որոնցում զգացվում է ոչ միայն խորը հոգեբան արվեստագետը, այլեւ բարձրագույն մակարդակի գծանկարիչը: Օգտագործելով տարբեր նյութեր՝ ածուխ, մատիտ, գրիչ, սանգինա՝ նա մնում է հարազատ իր ֆորմայի ավետիսյանական յուրահատուկ ընկալմանը, բացահայտելով դիմանկարի խոշոր հարթությունների համադրությունը, որը կարելի է ասել նաեւ իր դասավանդման սկզբունքն էր: Նրա մոտեցումը գծանկարին այնքան գծային չէր, այլ՝ ծավալային: Միշտ ընդգծում էր. «Մի՛ մանրացեք, խոշոր հարթություններով, ծավալի վրա աշխատելով նկարեք»: Մեզ խորհուրդ էր տալիս արտանկարել մեծ վարպետների գծանկարները: Շատ պահանջկոտ էր: Ամեն օր մենք պետք է ներկայացնեինք 30-ից ոչ պակաս ճեպանկար: Եթե չանեինք, նա չէր բարկանում, բայց կարող էինք կորցնել նրա ջերմ վերաբերմունքը: Չթերագնահատելով մասնագիտություն դասավանդած մնացած դասախոսներին, կարող եմ ասել, որ Ավետիսյանը մեզ տվեց ամենաշա՛տը եւ իր շնորհիվ մեր ամբողջ կուրսը կայացած նկարիչներ են տարբեր բնագավառներում»:

Հմայակ Ավետիսյանը դժվարին, բայց բեղուն ստեղծագործական կյանք ունեցավ. ապրեց ընդամենը 66 տարի: Մեծ տարիք չէ ստեղծագործողի համար, մանավանդ, եթե հանենք սովորելու, պատերազմի եւ հոգսերի խլած ժամանակը, նաեւ երկարամյա ծառայությունները կերպարվեստի կադրեր պատրաստելու գործում: Վարպետը ստեղծեց բազում մեծապաղանդ գործեր, թողեց համամարդկային հնչեղության ժառանգություն:

Հմայակ Ավետիսյանի ստեղծագործությունները գտնվում են Հայաստանի եւ արտերկրի տարբեր պատկերասրահներում, թանգարաններում, մասնավոր հավաքածուներում: Բայց նկարչի երազանքն այլ էր: Նրա մահվան կապակցությամբ Հայաստանի Գիտությունների ակադեմիայի թղթակից անդամ, արվեստի վաստակավոր գործիչ **Ռուբեն Զարյանը** գրեց. **«...Մի իսկական հայ եւս պակասեց մեր մտավորական շրջանակներից, մի մարդ, որի կրծքի տակ մխացող մի վիշտ կար, որ իրենն էր ու միայն իրենը չէր, բոլորինս էր»:**

Հմայակ Ավետիսյանի կտակում միայն մեկ պատգամ կար՝ ուղղված դուստրերին ու թոռներին՝ պահպանել իր ստեղծագործությունները՝ Վանում ցուցադրելու համար:

Հույսը երբեք չի լքել նկարչին...

ՍԵԴԱ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ